# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շաղ-Տիրան Թեթեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6 47-22

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«22» հունվարի 2019 թվականի N6

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ, 26-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի աղբահանության ծառայությունների ձեռքբերման գնման պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման հայտը, որոշում եմ

1. Ստեղծել «ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, հունվարի 22
գ. Մուսալեռ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի
N6 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ

# ԿԱԶՄ

# «ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-19/01» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ՝

Գոհար Սայադյան – ՀՀ Արմավիր մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար,

Հանձնաժողովի քարտուղար՝

Լուսինե Ալեքսանյան – ՀՀ Արմավիր մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ,

Հանձնաժողովի անդամներ

Սոֆիկ Առաքելյան - ՀՀ Արմավիր մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ,

Մարինե Սարգսյան - ՀՀ Արմավիր մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ:

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 8-Ի
N6 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ

ԿԱԶՄ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ՝

Մարինե Սարգսյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Հանձնաժողովի անդամներ՝

Ռիմա Դիլոյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի անանաբույժ

Սոֆիկ Առաքելյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«21» հունվարի 2019 թվականի N5

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերությունների և 20-րդ կետի պահանջներով՝ կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի կարիքների համար՝ Մուսալեռ համայնքի աղբահանության ծառայությունների ձեռքբերման գնանշման հարցման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանում համարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Հովհաննես Թովմասյանին, իսկ գնումների համակարգող՝ Լուսինե Ալեքսանյանին:
2. Պատասխանատու ստորաբաժանմանը և գնումները համակարգողին՝ գնման գործընթացը կազմակերպել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, հունվարի 21
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamayng@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«11» հունվարի 2019 թվականի N4

## ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով, «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում առևտրի և ծառայությունների ոլորտում հսկողություն իրականացնելու նպատակով՝ կարգադրում եմ.

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ (Գոհար Սայադյան) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքում գործող առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում յուրաքանչյուր կիսամյակի համար ստուգումների իրականացնել և մինչև տվյալ կիսամյակը հաջորդող ամսվա 5-ը ստուգումների արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին:
3. Տնտեսվարող սուբյեկտի մոտ հսկողության ժամկետ սահմանել ոչ ավել, քան մեկ օրը:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, հունվարի 11
գ. Մուսալեռ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի
ԹԻՎ 4 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ

ԿԱԶՄ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

***Հանձնաժողովի նախագահ՝***

*Գոհար Սայադյան* - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

***Հանձնաժողովի անդամներ՝***

*Հովհաննես Թովմասյան* - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

*Լուսինե Ալեքսանյան* - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ**
**ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«08» հունվարի 2019 թվականի N3

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, գյուղատնտեսական կենդանիների հաշվառման աշխատանքների իրականացման նպատակով՝ կարգադրում եմ.

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին /Մ. Սարգսյան/ 2019 թվականի հունվարի 8-ից մինչև հունվարի 14-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում կատարել գյուղատնտեսական կենդանիների հաշվառում և մինչև հունվարի 15-ը համայնքի ղեկավարին ներկայացնել հաշվետվություն:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, հունվարի 8
գ. Մուսալեռ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«8» հունվարի 2019 թվականի N2

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԵԿՆԱԾ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի «է» ենթակետով՝ *կարգադրում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի գործուղման մեկնած աշխատակիցների 2019 թվականի բյուջետային տարվա ընթացքում կատարած գործուղման ծախսերը փոխհատուցել համաձայն ներկայացված գործուղման վկայականների:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի առաջատար մասնագետին (Լուսինե Ալեքսանյան) սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, հունվարի 8
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«8» հունվարի 2019 թվականի N 1

## ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍԱՆԵԼԻՔ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 142-րդ հոդվածի առաջին մասով, Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման նախարարի 19.01.2009թ. N 03-Ն հրամանով՝ *կարգադրում եմ.*

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի և աշխատակիցների 2019 թվականի ամենամյա արձակուրդից օգտվելու ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, հունվարի 8
գ. Մուսալեռ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 8-Ի
ԹԻՎ 1 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ

# ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
# ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| N | Զբաղեցրած պաշտոնը | Անուն, ազգանուն | Արձակուրդի տրամադրման ժամանակահատվածը /ըստ ամիսների/ |
|---|---|---|---|
| 1. | Համայնքի ղեկավար | Էդգար Հովհաննիսյան | Հունիս |
| 3. | Աշխատակազմի քարտուղար | Գոհար Սայադյան | Օգոստոս |

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շաղ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» հունվարի 2019 թվականի N3

## ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ.թիվ 1066-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 23.01.2019թ. N01/14/00371-19 գրությամբ ներկայացված եզրակացությունը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիների սեփականությունը հանդիսացող 7.135 հա մակերեսով խաղողի այգին և 0,93 հա մակերեսով պտղատու այգին փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի միավորված ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, հունվարի 25
գ. Մուսալեռ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի N 3
ՈՐՈՇՄԱՆ

# ՑՈՒՑԱԿ
## ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔԻ ՓՈԽԱԴՐՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ

| Հ/Հ | Հողի սեփականատեր | Հողամասի առկա նպատակային նշանակությունը | Հողամասի մակերեսը /հա/ | Փոփոխվող հողատեսքի նպատակային նշանակությունը | Հողամասի ծածկագիրը | Հողամասի սեփականության իրավունքի վկայականի համարը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Սաշա Աղասու Կիրակոսյան | Խաղողի այգի | 0.77 | Վարելահող | 04-069-103-102 | 2410298 |
| 2 | Զարիֆ Ագիթի Ալոյան | Խաղողի այգի | 0.4 | Վարելահող | 04-069-105-019 | 367410 |
| 3 | Մրազ Արֆուտի Ալոյան | Խաղողի այգի | 0.41 | Վարելահող | 04-069-105-020 | 182158 |
| 4 | Քաջիկ Աղասու Կիրակոսյան | Խաղողի այգի | 0.52 | Վարելահող | 04-069-103-006 | 2410351 |
| 5 | Էդիկ Ղահրամանի Զաքնոյան | Խաղողի այգի | 0.21 | Վարելահող | 04-069-107-007 | 238032 |
| 6 | Շողիկ Արմենակի Հարությունյան | Խաղողի այգի | 0.06 | Վարելահող | 04-069-107-011 | 877969 |
| 7 | Մխիթար Ալբերտի Հայրապետյան | Խաղողի այգի | 0.338 | Վարելահող | 04-069-101-007 | 2540665 |
| 8 | Դավրեշ Չոլոյի Ալոյան | Խաղողի այգի | 0.32 | Վարելահող | 04-069-151-042 | 238009 |
| 9 | Սոֆիկ Գուրգենի Առաքելյան | Խաղողի այգի | 0.09 | Վարելահող | 04-069-133-033 | 238852 |
| 10 | Սեդա Սարգիսի Մանուկյան | Խաղողի այգի | 0.29 | Վարելահող | 04-069-154-010 | 367490 |
| 11 | Սեդա Սարգիսի Մանուկյան | Խաղողի այգի | 0.24 | Վարելահող | 04-069-133-010 | 367537 |
| 12 | Վարազդատ Ցոլակի Սայադյան | Խաղողի այգի | 0.22 | Վարելահող | 04-069-128-013 | 2354885 |
| 13 | Անահիտ Անուշավանի Վարդանյան | Խաղողի այգի | 0.31 | Վարելահող | 04-069-108-012 | 876372 |
| 14 | Արշակ Գևորգի Գրիգորյան | Խաղողի այգի | 0.25 | Վարելահող | 04-069-153-009 | 182143 |
| 15 | Հովսեփ Ազատի Տեր-Գրիգորյան | Խաղողի այգի | 0.24 | Վարելահող | 04-069-123-050 | 2438777 |
| 16 | Հովսեփ Ազատի Տեր-Գրիգորյան | Խաղողի այգի | 0.25 | Վարելահող | 04-069-124-051 | 2438785 |
| 17 | Հովսեփ Ազատի Տեր-Գրիգորյան | Խաղողի այգի | 0.127 | Վարելահող | 04-069-125-001 | 2438779 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 18 | Հովսեփ Ազատի Տեր-Գրիգորյան | Խաղողի այգի | 0.16 | Վարելահող | 04-069-121-008 | 2438778 |
| 19 | Հովսեփ Ազատի Տեր-Գրիգորյան | Խաղողի այգի | 0.36 | Վարելահող | 04-069-125-004 | 2438776 |
| 20 | Էլֆրիդա Բաբկենի Գևորգյան | Խաղողի այգի | 0.18 | Վարելահող | 04-069-0103-0002 | 27072016-04-0021 |
| 21 | Էլֆրիդա Բաբկենի Գևորգյան | Խաղողի այգի | 0.21 | Վարելահող | 04-069-0103-0068 | 22082016-04-0013 |
| 22 | Սոֆիկ Գուրգենի Առաքելյան | Խաղողի այգի | 0.11 | Վարելահող | 04-069-154-033 | 238851 |
| 23 | Սոֆիկ Գուրգենի Առաքելյան | Խաղողի այգի | 0.23 | Վարելահող | 04-069-154-032 | 714496 |
| 24 | Սոֆիկ Գուրգենի Առաքելյան | Խաղողի այգի | 0.19 | Վարելահող | 04-069-133-032 | 714495 |
| 25 | Արտավազդ Հակոբի Սայադյան | Խաղողի այգի | 0.32 | Վարելահող | 04-069-146-015 | 182156 |
| 26 | Վալենտինա Խաչիկի Կարապետյան | Խաղողի այգի | 0.17 | Վարելահող | 04-069-0123-0040 | 24082012-04-0186 |
| 27 | Վալենտինա Խաչիկի Կարապետյան | Խաղողի այգի | 0.16 | Վարելահող | 04-069-0124-0041 | 24082012-04-0183 |
| 28 | Աշոտ Մեսրոպի Սաֆարյան | Պտղատու այգի | 0.93 | Վարելահող | 04-069-129-022 | 738129 |

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թերզյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

### Ո Ր Ո Շ Ու Մ

«14» հունվարի 2019 թվականի N 2

### ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 4-ի N63-Ն որոշումը և սույն որոշման հավելվածում ներկայացված անհատ ձեռնարկատերերի թվով 8 հայտերը՝ որոշում եմ.

1. ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի վարչական տարածքում գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերին տալ 2019 թվականի ընթացքում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանված կարգով իրականացնել տեղական տուրքի գանձումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, հունվարի 14
գ. Մուսալեռ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԽՍԱԼԵՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի N2 ՈՐՈՇՄԱՆ

# ՑՈՒՑԱԿ

## ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ

| Հ/Հ | Անհատ ձեռնարկատիրոջ անուն, ազգանուն | Թույլտվության ժամկետը |
|---|---|---|
| 1 | Կատյա Աղաբեկյան | 1 տարի |
| 2 | Հովհաննիսյան Թամար | 1 տարի |
| 3 | Շամամյան Գրետա | 1 տարի |
| 4 | Մեհրաբյան Արայիկ | 1 տարի |
| 5 | Կոստանյան Սիրուն | 1 տարի |
| 6 | Վարդանյան Արևիատ | 1 տարի |
| 7 | Միրզոյան Վահե | 1 տարի |
| 8 | Մազմանյան Հովսեփ | 1 տարի |

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շաղ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» հունվարի 2019 թվականի N 1

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 37 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 11/12/2018թ. N Կ-06/12/2018-6-0067 որոշումը՝ որոշում եմ.

1. ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ղեկավարի 2018 թվականի սեպտեմբերի 25-ի «Բնակելի տան նկատմամբ գույքային իրավունքները վերականգնելու մասին» N 37 որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ կետերից հանել «կիսաքանդ շինություն» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, հունվարի 14
գ. Մուսալեռ